ՊԵՂԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լրագրիս միջոցով որ է իցէ մասնաւոր յայտարարութիւն տալել ամէնը պէտք է վճարէ ամէն 4 տաւէր համար 1 կապէկ արծաթ։

Հրատարակվում է ամէն շաբաթ օր, մի մի թերթ։ Տարեկան բաժանորդագրութեան գինն է 7 ռուբլի։

ԺԲ. ՏԱՐԻ — ՅՈՒՆՎԱՐԻ 18 1869 ԱՄԻ — № 2.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Փարիզ 27ին դեկտ. (8ին յունվարի)։ Պաշտօնական լրագիրը հաղորդում է, որ բոլոր տերութիւնները ընդունել են հրաւէրը, դեսպանաժողովին մասնակցելու համար։ Դեսպանաժողովը կը կազմվի 9ին յունվարի։

Կորֆու 24ին դեկտ. (5ին յունվարի)։ Աթէնքից հաղորդում են. «Այստեղ լինում են պատրաստութիւններ պատերազմի համար։ Յունաց զօրքը կենդրոնանում է սահմանի վերայ։ Զօրաժողովը սկսաւ. կառավարութիւնը գիտաւորութիւն ունի կազմելու 35,000 կանոնաւոր և 15,000 անկանոն զօրք։ Կանդիայի վերայ Պետրոպուլաքին անձնատուր եղաւ, անձնական աղատութեան պայմանով, և տաճկական նաւերը տեղափոխեցին նրան, 600 կամաւոր զինուորների ու Կանդիացիների հետ միասին, Սիրա կղզին։ Պետրոպուլաքին մեղադրում է ֆրանսիական հիւպատոսին։ Կանդիայի ժամանակաւոր կառավարութիւնը հրատարակեց յայտարարութիւն, որի մէջ ասում է, թէ կ՝ամառի իրապատասխանութեան մէջ։

Փարիզ 24ին դեկտ. (5ին յունվարի) Հավասի գործակալութիւնը ջրում է այն տեղի վաճառականոցում տարածված լուրը, թէ Ռուսաստանը և Տաճկաստանը իրանց կողմից այնպիսի պայմաններ են առաջադրել, որոնք սպառնում են յուսահատեցնելու դեսպանաժողովը։

Բերլին 25ին դեկտ. (6ին յունվարի)։ Նահանգական թղթակցութիւն լրագրում այսօր գրում են, որ կոմս Սոլմնը ստացել է լիազօր իշխանութիւն լինելու Պրուսիայի ներկայացուցիչը դեսպանաժողովում։ Կարծում են, որ եթէ չեն ծագել անակնկալ դէպքեր, դեսպանաժողովը կվերջանայ կարճ միջոցում։

Վիեննա 28ին դեկտեմբ. (6ին յունվարի)։ Այսօրվան բոլոր լրագիրները վրդովված էին լուրերով, թէ Ռուսաստանը պատրաստութիւն է տեսնում պատերազմի համար։ Իսկ այսօրվան կիսապաշտօնական լրագիրներում կրկնվում է լուրը, թէ Աւստրիայի կայսրը գնում է Գալիցիա։

Փարիզ 25ին դեկտեմբ. (6ին յունվարի)։ Etendard և Public լրագիրները յայտնում են, որ դեսպանաժողովը չէ յետաձգվում։

Public լրագիրը չէ երկրպագում, որ Յունաստանի կառավարութիւնը կուզէ դեսպանաժողովին իր յիշատակագիրը։

Բերլին 26ին դեկտ. (7ին յունվարի)։ Վաճառական Սուրհանդակ անուն լրագրում յայտնում են, ստոյգ աղբիւրներից, որ տաճկական կառավարութիւնը, տերութեանց պահանջին համեմատ, համաձայնեցաւ

ջնջելու իր վերջնագրի հինգերորդ յօդուածը, որով պահանջվում է Յունաստանից խոստումն, որ նա իր գործողութեանց մէջ կհամաձայնվի ազգամիջեան իրաւանց և դաշնադրութեանց հետ:

Կ. Պոլիս 24ին դեկտ. (7ին յունվարի): Այստեղ յոյս ունին, որ դեսպանաժողովը խաղաղական հետևանք կունենայ: Յոյները հաւատացնում են, որ ապստամբները Կանդիայի վերայ շարունակում են իրանց ապստամբութիւնը, Պետրոպուլաքիի անձնատուր լինելից յետոյ էլ:

25ին դեկտ. (6ին յունվարի): Տաճկական կառավարութիւնը խընդրում է, որ դեսպանաժողովը յետաձգվի մի շաբաթ. նորա համար, որ տէրութեանց դեսպանները, որոնք գտանվում են Փարիզում, կարողանան ստանալ իրանց տէրութիւններից կարևոր հրահանգները:

Բելգրադ 25ին դեկտ. (6ին յունվարի). Պաշտօնական աղբիւրներից հաղորդում են, որ տաճկական կառավարութիւնը պարապած է Բոսնիաում պատրաստութիւններով պատերազմի համար և կարդում է զինարաններ Սերբիայի սահմանի վերայ:

Լոնդոն 26ին դեկտ. (7ին յունվարի) Times լրագրի Բերլինի թղթակիցը հաղորդում է, որ Դաուդ փաշային, որնոր Դրան կողմից խրրկած է Փարիզ, յանձնված է գնելու այս տեղ Շասսպոյի հրացաններ:

Կ. Պոլիս 26ին դեկտեմբ. (7ին յունվարի): Turquie անուն լրագրում հակառակում են տէրութեանց միջամտութեանը, որովհետև այս կարող է միայն ձգաել հետևանքներին, որոնք ստացվեցան Խրիմու պատերազմից: Այսպէս մօտերումս տէրութիւնները պահանջում էին Կանդիայի բաժանումը Տաճկաստանից, չնայելով որ իրանք երաշխաւոր էին հոգալու Օսմանեան տէրութեան ամբողջութեան համար: Հաւանական է. գրում է յիշեալ լրագիրը. որ ներկայ դեսպանաժողովի հետևանքն էլ կլինի տաճկական տէրութեան նուազումը: Ուստի և լաւ կ'անէր Տաճկաստանը, եթէ ազատվէր նոցա ստիպողական լծից և սկսէր ներգործել ինքնուրոյնաբար. եթէ բանագնացութեանց ընթացքը կ'ստիպէր Դրան ներկայացուցչին մերժել մասնակցութիւնը դեսպանաժողովի մէջ:

Կ. Պոլիս 26ին դեկտ. (7ին յունվարի): Տաճկական կառավարութիւնը իր դեսպանին Փարիզում, Զէմիլ փաշային, հրաման ուղղեց, որ նա բողոքէ և հեռանայ մասնակցութիւնից դեսպանաժողովի մէջ, եթէ այս տեղ դատողութիւնները կ'ացնեն նորա վերջնագրի հինգ կէտերից:

Վիեննա 27ին (8ին յունվարի). Presse լրագրում հաղորդում են, որ հարցը Յունաստանի ներկայացուցչին դեսպանաժողովը ներս թողնելու մասին վճռած է այնպէս, որ նա իրաւունք ունի հաղորդելու ժողովին կարևոր մեկնութիւնները և պաշտպանելու Յունաց կառավարութիւնը, միայն չունի իրաւունք առնելու ժողովին առաջարկութիւններ:

Ս. Պետերբուրգ. 4ին յունվարի: Դեսպանաժողովի նիստերը լինում են առանց Յունաստանի ներկայացուցչի:

Ապստամբները Կանդիայի վերայ մաքրեցին կղզու արևմտեան մասը

Թէնքումը հասարակական մտքերը վրդովման մէջ են:

Պարսկաստանը կենդանացրեց իր զօրքերը պարսկական — տաճկական սահմանի վերայ:

Ս. Պետերբուրգ 6ին յունվարի. Փարիզում մեկին յունվարի եղաւ դեսպանաժողովի նիստը, վերջին ձևերը կատարելու համար: 22ին խրկվում է Յունաստանին յայտարարութիւն:

Մինչև Յունաստանի պատասխանը դեսպանաժողովը մնում է բաց:

Կ. Պոլիս 12ին յունվարի. Տաճկական տորմիլիկը թողեց Սիրա կղզին հաւաստիք ստանալից յետոյ, որ Լնդոնը մինչև դատաստանի վճիռը չի դուրս դալ նաւահանգստից:

Եգիպտոսը առաջարկեց սուլտանին նաւատորմիղ և 30,000 զինուոր:

Տաճկաստանը շարունակում է զինուորվելու, երկիւղ կրելով, որ Գէորգ թագաւորը անկարող կ'լինի ստիպել իր նախարարութիւնը ընդունելու դեսպանաժողովի վճիռը:

Աթէնք 24-ին դեկտ. Օգեսսայի համբաւաբերի թղթակիցը հաղորդում է, որ Յունաստանումը հասարակութեան մտքերը մեծ վրդովման մէջ են. կամաւոր զինուորները ամէն տեղ պարապած են պատերազմական կրթութիւններով. Յունաստանի բոլոր բնակիչները ոգևորված են: Պատերազմական պատրաստութիւնները լինում են անսովոր գործունէութեամբ. բոլոր աղդը պատրաստվում է պաշտպանութեան համար: Կառավարութիւնը խրկեց զինուորական ճարտարապետ Սիրան, Նավպլիան, Պարոսը, և Պարապամբացնելու համար. երկու թնդանօթաձիգ զինուորների վաշտեր և մի հեծելազօր գուն

երեկ խրկվեցան ցամկական — յունական սահմաններին մօտ մի քանի օրից մի քանի այլ թնդանօթաձիգ զինուորների վաշտեր եւ կ'խրկվին։ Բացի սրանից կառավարութիւնը կարգադրեց գնելու Բելգիաւում ասելնաւոր հրացաններ։ Ցոյս ունին, որ զօրաց թիւը կ'հասնի մօտ 45,000 հոգու։ Բերդապահ զօրքի. ազգային թիկնապահ զօրքերի եւ կամաւոր զինուորների թիւը կը հասնի մօտ 70,000։ Պէտք է նկատել, որ Յոյն ազգային զօրքը գանազանվում է եւրոպականից նրանով, որ նա առաջին է ընկնում կրակի մէջ, իսկ կանոնաւոր զօրքը օգնում է նորա գործողութեանց։ Լուրերին նայելով, սառորազրութիւնը յունական փոխառնութեան համար կ'բացվի Ամերիկաում եւ փոխառնութեան մի մասի տեղ կ'հատուցանէ մեծ հասարակապետութիւնը պատերազմական նաւեր, պատերազմական պաշարներ եւ վառօդ։ Ասում են, որ նախաբարների ժողովում թագաւորը յայտնել է, որ ինքը ամենեւին երկիւղ չէ կրում յոյն նաւատորմիղի համար։ Դանիայի կառավարութիւնը վաճառեց մեր կառավարութեան երկու Ֆրեգատ. բացի սրանից սպասում են շուտով երկու զրահակիր նաւերի դալստեանը. այն է դ'Էվորդ, որ շինած է Լոնդոնում, Օլգա, որ շինած է Թրիեստում։ 21-ին դեկտ. Սիրայից գրում են, որ Հորարթ փաշան իր նաւատորմիղով, որ բաղկանում է տասն եւ մի նաւերից, շրջում է այս կղզու շրջակայքերում։ Լուր կար, որ Հորարտ փաշան պահանջում էր. որ Էնոզիս շոգենաւը իրան մատնեն եւ տուեց տեղական իշխանութեանցը այս մասին 48 ժամ ժամանակամիջոց։ Եթէ կ'մերժվի իր պահանջը սպառնում է գերելու շոգենաւը բռնութեամբ։ Տեղական իշխանութեանց պատասխանը դեռ ևս անյայտ է։ Երկու անգղիական նաւեր նոյն օրը բերին այն կղզին երեք հազար տահատիկ վառօդ։

— 26-ին դեկտեմբերի. Աթէնքի կենդրոնական մանեաժողովը հրատարակեց հետեւեալ հրաւէրը։

Յոյներ, եղբայրներ, հայրենակիցներ, անհաւատ եւ յաւիտեանս մեր կրօնի եւ ազգի դէմ տանելութիւն երդուողը նորից ձեռք բարձրացրեց մեր վերայ։ Նա կամենում է ջնջել ազատ Յունաստանը, որովհետեւ նորա մէջ է բոլոր Յոյների յոյսը եւ ապագան։ Նա իր վերջնագրով պահանջեց մեզնից ամենից ամօթալի հնազանդութիւնը. նա կամենում է ճնշել մեր առուտուրը. նա կամենում է, որ դուք ևս, որ նորա տէրութեան խաղաղասէր քաղաքացիքն է.ք, նոյնպէս զգաք նորա չարութիւնը։ Այսպիսի բարբարոսութեան դէմ կ'ապստամբի բոլոր Եւրոպան։ Եղբայրներ, հայրենակիրներ, Մարաթոնի եւ Թերմոպիւլէի յաղթիչների սերունդներ, քաջալերվեցէ.ք. սուլտանի 60,000 ընտիր զինուորները ոչինչ չ'կարողացան ազդել մի փոքրիկ մեր ազգակից խմբին Կանդիայի վերայ. մեր մի նաւը դէմ կ'դնի նորա բոլոր նաւատորմիղին. Մի վ'հատէ.ք, լինենք դիւցազներ մեր հայրերի նման եւ մեր եղբարց նըման. որոնք պատերազմում են Կրէտում եւ մեր սուրբ դրօշակը կրկին կ'փայլի սուրբ Սոփիայի տաճարի պղնձէ գմբէթի վերայ։ Յոյներ, եղբայրներ, հայրենակիցներ, քաջալերվեցէ.ք։ Մենք հսկում ենք ձեր վերայ։ Միջոց մենք բաւական ունինք։ Ապագան մերն է։ Անհաւատի վերջին ժամը խփել է։

Աթէնք 21-ին դեկտեմբերի։

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Ներսիսեան ազգային — հոգեւոր դըպրոցի հոգաբարձութեան կարգադրութիւնները։

1868 դեկտ. 5-ին պ. Ս. Պալասանեանցը թողեց ազգային պատմութեան դասատուութիւնը եւ մեծ. հոգաբարձութիւնը յանձնեց այն ժամանակաւորապէս մեծ. տէր Սահփան աւագ քահանային Մանդինեանց։

— 12-ին դեկտ. Դպրոցի ներքին յարկի երեք սենեակները, հարաւային կողմում, վարձու տրվեցան պ. Գէորգի Դաւթեանցին տարին 360 ռուբլով։

— 19-ին դեկտեմբերի. Հոգաբարձութիւնը ստացաւ նուէր մեծ. Սուքիաս վարդապետ Պարզեանցից 35 ռուբլի արծ. որ երթեւեկ աշակերտների համար գնվին կարեւոր գրքեր։

19. մեծ. հոգաբարձութիւնը ստացաւ նուէր Ռուսաց լեզուի նախկին ուսուցիչ պ. Գարայեվից վեց դասի փողը 9 ռուբլի նոյնպէս աշակերտաց կարեւոր գրքերը ձեռք բերելու համար։

— 31-ին դեկտ. հերթական հոգաբարձու նշանակվեցաւ 1869 թուականի յունվար ամսի համար մեծ. պ. Բ. Խօջայեանցը։

31-ին դեկտ. Դպրոցի անշարժ կալուածոց համար պահապան կարգվեցաւ, որ կալուածքները մաքուր մնան եւ ապահով։

1869 յունվարի 9-ին Նկարիչ պ. Ստ. Ներսիսեանցը ներկայացրեց հոգաբարձութեան երջանկայիշատակ Ներսէս Ե. աշտարակեցի կաթուղիկոսի պատկերը եւ ստացաւ սորա համար վարձ 100 ռուբլի։

— 9-ին յունվարի. Դպրոցի անշարժ կալուածոց վերատեսուչ մեծ. տէր Թադէոս Խօջաէինանթեանց քահանայն, համաձայն իւր բանաւոր խնդրանաց, արձակվեցաւ իր պաշտօնից եւ նորա փոխարէն վերատեսուչ կալուածոց նշանակվեցաւ մեծ. պ. Բ. Խօջայեանցը։

— 9-ին յունվարի. Դպրոցի մեծ. հոգաբարձութիւնը, ըստ առաջարկութեան առաջնորդին Թեմիս, Բարձր Սրբեղան Մակար Արքեպիսկոպոսին, կարգաւորեց բանալ Նաւթլուխումը մի ծխական դպրոց։

9-ին յունվարի ըստ առաջարկութեան հոգաբարձութեան ծաղկեվանքի վերատեսուչ հաստատվեցաւ Բարձր Սրբազան Առաջնորդից Զոհրաբ Հայրապետեանցը, իր հօր փոխարէն։

Ահա հաղորդում ենք այստեղ, համաձայն մեր խոստման, մեր ընթերցողներին այն ճառը, որնոր նոր տարու օրը ասաց Ներսիսեան դպրոցի չորրորդ դասատան աշակերտ Նիկ. Լալայեանցը, սրբազան առաջնորդի եւ մեծ. հոգաբարձուների առաջին։

Առաքելաշնչիւղ Սրբազան տէր,

Եւ խնամաշատ Հայր Բարերար.

Զնուիրական եւ զբարեբաստիկ 'ի Հայրենեացն մեզ որդւոցս նոցին 'ի վաղաժամանակեայ աւուրց ածանցեալ պատուադրութիւն խորհրդականս տարեսկիզբն առաւօտու, վերահուչակել ըստ վայելչականին՝ բան և խորհուրդք չեն բաւական համբակիս, զի թէ հին և ընտելական շնորհք դասատակիս՝ զուարնաղին սաղմոսարան կիթառի՝ ախորժելուր հարկանել լարս, և շրթանցս յարմարութիւնք՝ դեղգեղել զքաղցրանուագ եղեգնափող՝ աստուածահայր մարգարէին հետեւելով խրախուսանաց, փող հարէ.ք 'ի գլուխս ամենայ, յաւուր նշանաւորի տարեկանաց. սակայն 'ի ներքին զգացմանց հոգւոյս, չարդիւնաւորին բաւականութիւնք դրուատական ճառից կենդանի երանգօք երախտագիտութեան, գեղագունել զնմացուած հանրակ խրիվեցան ցամկական — յունական սահմանների մօտ մի քանի օրից մի քանի այլ թնդանօթաձիգ զինուորների վաշտեր եւ կ'խրկվին։ Բացի սրանից կառավարութիւնը կարգադրեց գնելու Բելգիաւում ասելնաւոր հրացաններ։ Ցոյս ունին, որ զօրաց թիւը կ'հասնի մօտ 45,000 հոգու։ Բերդապահ զօրքի. ազգային թիկնապահ զօրքերի եւ կամաւոր զինուորների թիւը կը հասնի մօտ 70,000։ Պէտք է նկատել, որ Յոյն ազգային զօրքը գանազանվում է եւրոպականից նրանով, որ նա առաջին է ընկնում կրակի մէջ, իսկ կանոնաւոր զօրքը օգնում է նորա գործողութեանց։ Լուրերին նայելով, սառորազրութիւնը յունական փոխառնութեան համար կ'բացվի Ամերիկաում եւ փոխառնութեան մի մասի տեղ կ'հատուցանէ մեծ հասարակապետութիւնը պատերազմական նաւեր, պատերազմական պաշարներ եւ վառօդ։ Ասում են, որ նախաբարների ժողովում թագաւորը յայտնել է, որ ինքը ամենեւին երկիւղ չէ կրում յոյն նաւատորմիղի համար։ Դանիայի կառավարութիւնը վաճառեց մեր կառավարութեան երկու Ֆրեգատ. բացի սրանից սպասում են շուտով երկու զրահակիր նաւերի դալստեանը. այն է դ'Էվորդ, որ շինած է Լոնդոնում, Օլգա, որ շինած է Թրիեստում։ 21-ին դեկտ. Սիրայից գրում են, որ Հորարթ փաշան իր նաւատորմիղով, որ բաղկանում է տասն եւ մի նաւերից, շրջում է այս կղզու շրջակայքերում։ Լուր կար, որ Հորարտ փաշան պահանջում էր. որ Էնոզիս շոգենաւը իրան մատնեն եւ տուեց տեղական իշխանութեանցը այս մասին 48 ժամ ժամանակամիջոց։ Եթէ կ'մերժվի իր պահանջը սպառնում է գերելու շոգենաւը բռնութեամբ։ Տեղական իշխանութեանց պատասխանը դեռ ևս անյայտ է։ Երկու անգղիական նաւեր նոյն օրը բերին այն կղզին երեք հազար տահատիկ վառօդ։

— 26-ին դեկտեմբերի. Աթէնքի կենդրոնական մանեաժողովը հրատարակեց հետեւեալ հրաւէրը։

Յոյներ, եղբայրներ, հայրենակիցներ, անհաւատ եւ յաւիտեանս մեր կրօնի եւ ազգի դէմ տանելութիւն երդուողը նորից ձեռք բարձրացրեց մեր վերայ։ Նա կամենում է ջնջել ազատ Յունաստանը, որովհետեւ նորա մէջ է բոլոր Յոյների յոյսը եւ ապագան։ Նա իր վերջնագրով պահանջեց մեզնից ամենից ամօթալի հնազանդութիւնը. նա կամենում է ճնշել մեր առուտուրը. նա կամենում է, որ դուք ևս, որ նորա տէրութեան խաղաղասէր քաղաքացիքն է.ք, նոյնպէս զգաք նորա չարութիւնը։ Այսպիսի բարբարոսութեան դէմ կ'ապստամբի բոլոր Եւրոպան։ Եղբայրներ, հայրենակիրներ, Մարաթոնի եւ Թերմոպիւլէի յաղթիչների սերունդներ, քաջալերվեցէ.ք. սուլտանի 60,000 ընտիր զինուորները ոչինչ չ'կարողացան ազդել մի փոքրիկ մեր ազգակից խմբին Կանդիայի վերայ. մեր մի նաւը դէմ կ'դնի նորա բոլոր նաւատորմիղին. Մի վ'հատէ.ք, լինենք դիւցազներ մեր հայրերի նման եւ մեր եղբարց նըման. որոնք պատերազմում են Կրէտում եւ մեր սուրբ դրօշակը կրկին կ'փայլի սուրբ Սոփիայի տաճարի պղնձէ գմբէթի վերայ։ Յոյներ, եղբայրներ, հայրենակիցներ, քաջալերվեցէ.ք։ Մենք հսկում ենք ձեր վերայ։ Միջոց մենք բաւական ունինք։ Ապագան մերն է։ Անհաւատի վերջին ժամը խփել է։

Աթէնք 21-ին դեկտեմբերի։

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Ներսիսեան ազգային — հոգեւոր դըպրոցի հոգաբարձութեան կարգադրութիւնները։

1868 դեկտ. 5-ին պ. Ս. Պալասանեանցը թողեց ազգային պատմութեան դասատուութիւնը եւ մեծ. հոգաբարձութիւնը յանձնեց այն ժամանակաւորապէս մեծ. տէր Սահփան աւագ քահանային Մանդինեանց։

— 12-ին դեկտ. Դպրոցի ներքին յարկի երեք սենեակները, հարաւային կողմում, վարձու տրվեցան պ. Գէորգի Դաւթեանցին տարին 360 ռուբլով։

— 19-ին դեկտեմբերի. Հոգաբարձութիւնը ստացաւ նուէր մեծ. Սուքիաս վարդապետ Պարզեանցից 35 ռուբլի արծ. որ երթեւեկ աշակերտների համար գնվին կարեւոր գրքեր։

19. մեծ. հոգաբարձութիւնը ստացաւ նուէր Ռուսաց լեզուի նախկին ուսուցիչ պ. Գարայեվից վեց դասի փողը 9 ռուբլի նոյնպէս աշակերտաց կարեւոր գրքերը ձեռք բերելու համար։

— 31-ին դեկտ. հերթական հոգաբարձու նշանակվեցաւ 1869 թուականի յունվար ամսի համար մեծ. պ. Բ. Խօջայեանցը։

31-ին դեկտ. Դպրոցի անշարժ կալուածոց համար պահապան կարգվեցաւ, որ կա-

բահոչակ խոստովանութեան մեծախոր հուրդն Երեմեայ առ անբաւութիւնս ողորմութեան երկնաւոր զօրութեանն ծագողի մեզ ընորոգութիւն առաւօտուս: Ընդարձակեցէք լինձ ուրեմն Սրբազան Տէր զերաւունս, յասպարէզ անցեալ պատկառելի կացրդիս, դէթ դուշնաքեայ բանիւք արտայայտել ըղխորհուրդ տարեգլուխ նշանաւոր աւուրս՝ և նախ զառաջինն, զումարմանս մերոյ:

Ի նորոգութեան առաւօտու, երբ տարաշխարհիկ պանդուխան զդէմս դարձուցեալ 'ի կողմն հայրենեաց աշխարհին, լալահառաչ ձայնիւ և անձկակարօտ սրտիւ զբարիս աղերսէ 'ի հաճութեանց խնամակալին երկնից վասն մերձաւորացն և ազգակից եղբարց, 'ի շնորհաբեր ժամուս, երբ իւրաքանչիւր ազգ և ժողովուրդ՝ յորդին և զեղուն 'ի հրապարակս քաղաքաց, զբարեբար ազգապետին յիշատակել զինամս անցեալ աւուրց, և յառաջիկայիցն զօտեւորել 'ի վաստակ. 'ի յատկանիշ վայրկենիս, երբ անցնիւր անհատ զշնորհաւորական բանից դրուատիս և զբարեմաղթութեանց նուադս զուարթերես ընդլայնեալ երկայնին առ մի մի նախամեծար անդամ մարդկութեան և առ պատկառելի հոգեւոր և մարմնաւոր բարերարս իւրեանց, սիրա 'ի բոլին ըստ վաղընջական առ մեզ սովորութեան, ամենապարեմք կանխել 'ի դրունս երախտաշատ բարեգութ մեր խնամակալիդ՝ և բիւրաւոր մաղթանօք սրտանեռանդ բաղձանաց շնորհաւորեմք Զեզ զայս տարեմուտ օր, զոր նորոգէ մեզ 'ի նախանցեալ հնութեանց ձեռն ամենաբաշխ ժամանակացն հօր: Պատչեմք զուարճախառն պատկառանօք շնորհաւորել դրուատական բանից ճառիւք՝ և ուրախութեան զուարթ երեսօք զնորոգ քայլափոխ հասարակաց հօրդ յասպիճան առաւելութեան ամաց բարելրական հասակի, որում պահպանողական շնորհօք խնամածեալ իշխանն մահու և կենաց, արժանի առաջնորդական վարչութեան համարի զՁեզ յիւրումն ժողովրդեան՝ շնորհածաւալ զիմացդ յանդիման մակադելով զառ հասարակ խումբ որդւոյդ: Յառաջեմք ընդգրկել զայս անդրանիկ առաւօտ ամենորարեր կաղանդիս նշանաւոր 'ի տարեկանս թէ հասակի աճման մարմնոյ, թէ շնորհաց հոյգւոյն և թէ բաղդաւորութեանց ամենեցուն մեր առ հասարակ. զի խնամօք անձնադիր հօտապետիդ և մեծապատիւ Տեարց հոգաբարձուաց մերոց թեւակոխեմք 'ի գիտութեանց 'ի զիտութիւնս առ 'ի ճանաչել զնշանակութիւն մարդկային կոչման, որդեգրական շնորհաց և աղգական պարտուց:

Այս ահաւանիկ, Սրբազան Հայր, անդրանիկ խորհուրդ համախմբութեան որդեգրելոցս ձերոց շնորհաց, հաւանիմ ասել՝ այցելու պարոնայցս և զերարժան հոգեորականացս, զոր հեղեալ տարածանեմք առաջի խորին զդացմամբ հոգւոյ. իսկ որ ինչ և միւսում պատկերի հանդիսականս աւուր նկարագրութիւն, յառաջ ածել հասից: — Հանդիսութիւն նշանաւոր ասեմ աւուր՝ չէ ինչ տարադէպ. զի 'ի տարեգլուխս յայսմ աւուր իբր 'ի հանդիսական հրապարակի դատաստանի խղճին և յանաչառ ատենի ժամանակին, 'ի քնին առնու ազգ իւրաքանչիւր թէ յանցելումն ամի զոր արդիւնս և իրաւունս վաստակեցաւ յասպարիզի ազգական յառաջադիմութեան: 'Ի փորձ և 'ի կշիռ առնու անհատ իւրաքանչիւր թէ իմաստութեամբ արդեօք թէ անկշռադատութեամբ տնօրինեաց զգործ իւր, նկատեալ առ բարեբաղդութիւն կամ առ թշուառութիւն իւրոյ գերդաստանի: 'Ի համար և 'ի հաշիւ բերէ անձնիւր հոգաբարձու՝ թէ բերեխիղճ արդիւնաւորութեամբ տնտեսեաց ապաստանելոց ի խնամս իւր՝ զգութ և զհոգածութիւն թէ զանձին միայն որոնեաց զփառս և զհանդիստ: Եւ համանգամայն իսկ ասել զձող չափու և գիտակն համեմատութեան ի ձեռն առնու ժողովուրդ ամենայն չափել և կարակնել զիւր տարեւորական գործունէութիւն յասպարիզի մարդկութեան, թէ արդեօք ապագայիցն իւրոց որդւոց զպարծանս արդահատող թողու հայրութեան, թէ ըզպիտակ անուն համբարձմանն ըստ բաղդին յայն ամենառնուիրական: Ցայս օրինակ համեմատութեանց նախանցելոցն աւուրց ազգի միոյ և ժողովրդեան՝ ընդ ներկային արարուածովքն հանդերձ, 'ի քննին ծանր են լինձ պատանուոյս մտանել. հապա օն անդր ի հեռանկատ և ի հրապարակական թողեալ դատաւոր, յազգային ասեմ լրագրապետս՝ ըղխնդիրն բազմազբաղ և զլուծումն պատշաճական հրահանգօք, դարձայց ես մուտ գործել ի շրջան ներքին և արտաքին կառավարութեան դպրոցին մերոյ, որ այսօր նշանաւոր զրաւէ զտեղի յազգային խնդիրս, և արդարութեան խղճիւ ճշդրտաբանել Զեզ որ ինչ ջանադիր հսկողութիւնք են մեծարոյ հոգաբարձուաց և դասատարակաց մերոց:

Խոնարհիմ ես Սրբազան Տէր, ի յօրէ անտի մուտ գործելոյն նոցին զերազանցութեանց ի վարումն պաշտօնի իւրեանց, ջերմեռանդն ջանացողութեամբք՝ ըստ միակ բաղձանաց պատուական զլխոյ Հայաստանեայցս եկեղեցւոյ՝ Տեառն Տեառն Գէորգայ սրբազնագոյն կաթուղիկոսի և ծայրագոյն պատրիարգի, և ըստ քաջալուրջ հրահանգաց սրբազան Տեառնդ, զուն գործեն ես քան զես ընդարձակել զմիջոց նիւթական և մտաւորական զարգացմանց դպրոցին՝ և աշակերտելոցս ի նմին, զանձնական զոհելով զհանգստութիւն իւրեանց յասպարիզի ազգասիրական ձգնութեանց: Նշողարձակ արտափայլեն զգուվանի վաստակս, առ ի նշանաւորել արդեամբ ի կամակարն պաշտօնատարութեան իւրեանց զարդարացի վարկումն հայազգի հասարակութեան քաղաքին: Իսկ զքրանավաստակ դասատարակաց մերոց՝ զայս և եթ հնարաւորիմ փոքրաբանել. զի որպէս աւետաւոր առաւօտ նորոյ տարւոյս՝ երաշխաւորէ մեզ զնորանոր յաջողուածս և զբարեբաստիկ կեանս յընթացս տարեւորս շրջանի, նոյնպէս հանապազօրեայ խորհուրդք ուսուցչաց մերոց՝ և խնամով գործադրութիւնք նոցին, խոստանան զնորանոր և ըղհիմնաւոր կրթութիւնս՝ ի զանազան առարկայս մեզ մատակարարելի ուսմանց:

Ուսումնակից եղբարք, զարդիս զի՞նչ այլ ճոյ մեզ, զի՞նչ եթէ ոչ երախտագէտ հոգւով փառս և դոհութիւնս վերախնկել յաթոռ նախախնամակալին, որ զօրս զայս մեծ պարգևեաց մեզ. և շնորհակալ մտօք հայցել, զի զնորին սրբազնակատար օծութիւնն զվեհասիճան հայրապետն մեր՝ ընդ երկայն աւուրս շնորհեսցէ մեզ, շնորհաշարդ պայծառացուցանելով զլեշխանութեան նորին զաւազան ի հանդիսի նախնաւանդ օրինացն և ազգական և եկեղեցական վաղադարեան աւանդութեանցն պահպանութեան: Ընդարձակեսցէ զաւուրս կենաց սրբազան զիտատպետիս Հայոց Վրթանեայց՝ անփորձ վերբերելով զսա յամենայն չարաղէտ պատահարաց 'ի վիպիթարութիւն մեզ որդեգրացոցս Ներսիսեան Ազգային — Հոգեւոր ուսումնարանի և հայազգի ժողովրդականաց: Զսէր համակամութեան և զհոգի ազգասիրութեան զերանելի հոգաբարձուաց դպրոցին վառ և բորբոք պահեսցէ յաւելով յանձն ամենե-

ցուն նոցա զկարողութիւն՝ տանել ընդարձակ սրտիւք ամենայն ընդ առաջ ելեալ դժուարութեանց պաշտօնի իւրեանց. զորձնականեսցէ պատարուն արդեամբք զամենորեկական վաստակ փութաջան ուսուցչաց մերոց 'ի փառաւորութիւն անուան զպրոցին և զարդարանս մերոյ մանկութեան : Եւ զմեզ զամենեսին մասնաւորեսցէ եօթնարփեան շնորհաց հոգւոյն՝ 'ի պիտանաւորութիւն ազգի և եկեղեցւոյ, ամէն :

Շարադրեաց և ասաց աշակերտ չորրորդ դասատան Ներսիսեան Աղգային — Հոգևոր Դպրոցի՝ Նիկողայոս Լալայեանց Ղզլարեցի :

'Ի 1-ն յունվարի 1869 ամի
'Ի Քաղաքն Տփխիս :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԻՐԻ'Ր ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒԴ

Պատմութիւն դաղթականների կեանքից Հիւսիսային Ամերիկայում)

ԳԼՈՒԽ Բ.

Ավդուստինը գնաց Բրեմեն, որ մեծ վաճառաշահ քաղաք է, ուր կային շատ նաւեր, որոնցով կարելի էր ուղևորվել աշխարհի դէպի ամէն մասերը: Կամեցաւ տեղեկանալ թէ նրանցից որն է գնալու Ամերիկա: Հէնց այդ ժամանակումը Եւրոպայի և նոր աշխարհի մէջ կային ոչ պակաս երկիւղներ : Ավդուստինը իմացաւ, որ մի մեծ վաճառականական նաւ ճանապարհորդելու է այն օրերում դէպի Նիւ—Եօրք, գնաց որոնելու նաւապետին, որ խօսի նորա հետ :

Նաւապետը էր հմուտ և չափահաս ծովագնաց, որնոր այրվել էր սաստիկ հարաւային արեգակից : Նորա աչքերում բարութիւնը փայլում էր, ով գործ էր ունեցել նաւապետ Սաեսինգի հետ, վկայում էր, որ մարդուր, ճշմարիտ և հաստատաբարոյ մարդ է: Նա կարողանում էր հաւատարմութիւն աղդել իւր ճանապարհորդակիցների մէջ մինչև անգամ ամենատաստիկ փոթորկի ժամանակը, երբ որ ամէնին տիրում էր երկիւղը և յուսահատութիւնը, ոչ ոք համարձակվում էր անհնազանդ լինել նաւապետին և չեռ կանգնել նորա հրամանիցը :

Ավդուստինը դուռ նրան իջևանի մէջ ծովի ափումը, ձեռին մի բաժակ գինի բռնած : Ծեր ծովագնացը նստել էր լուսամտի վերայ, և զուարճանում էր նայելով դէպի իւր նաւը, որ կոչվում էր „Կարոլինա" որ կանգնած էր նաւահանգստում :

— Ի՞նչ է հարկաւոր ձեզ, պատանի, հարցրեց նա Ավդուստինից, երբ որ Ավդուստինը յայտնեց թէ բան ունի խօսելու նորա հետ :

— Ես կամենում եմ ճանապարհել դէպի Ամերիկա, պատասխանեց նա հաստատապես. բայց սիրտը սաստիկ բաբախում էր :

— Ահա ինչ եմ ասում. հարկաւոր է պատրաստվել շուտով, որովհետև „Կարոլինան" (նաւը) վաղը ճանապարհ կ'ընկնի, թէ հողմը չ'փոխարկի, ուրեմն բերէք ձեր կայքը նաւի մէջ, և հատուցէք ութսուն և հինգ տալեր (93 կոպ. արծ.) և կարող էք այժմ տեղ ունենալ :

Այս խօսքը, որ է ութսուն և հինգ տալեր, զարմացրեց Ավդուստինին. նա ամենևին մտածել չէր, թէ մինչև Նիւ—Եօրք այնքան թանկ կ'լիներ. այդ պատճառով էլ նա ճանապարհի ծախքի համար քիչ փող էր վեր առել և մնացեալը թողել էր մօր և քոյրերի համար : Խոնարհեցնելով գլուխը տրրտում սկսաւ խօսել :

— Ես չունեմ կարողութիւն այդ գումարը հատուցանելու . . . չեմ կարող արդեօք գործել ինչպիսի և իցէ գործ նաւումը, որ օգուտ լինի . . .

Նաւապետը սեղմեց Ավդուստինի ուսը. և նայելով հարկադրաբար այդ գեղեցկին՝ պատասխանեց քաղցրութեամբ .

— Ես տէրը չեմ „Կարոլինայի" և չեմ կարող պակասցնել գինը, որը նշանակված է ամէնի համար: Լաւ է քեզ համար մնալ Եւրոպայումը, եթէ չես կարող հատուցանել ութսուն և հինգ տալերը .

Ավդուստինը կարող էր հատուցանել այդ գումարը, միայն մտածում էր, եթէ Ամերիկայում նա պատահի ձախորդութեան, ապա էլ չէ կարող յետդառնալ դէպի մայրը, և կարելի է, որ էլ նրան չ'տեսնէ : Այդպիսի մտածմանց մէջ նորա աչքերը լցուեցան արտասուքով , ինքն էլ շշնջելով ասում էր—խղճալի մայրիկ :

Այս խօսքերը շարժեցին նաւապետին. երբ որ լսեց : Նա սկսաւ զթալ այդ խեղճ պատանեակի վերայ տեսնելով նորա պարզ և յարգելի հայեցուածքը, ևս այն թէ ինչպիսի քնքոյշ կերպով սիրում էր իւր մօրը, ուստի կամեցաւ նրան օգնել :

— Լսիր սիրելի իմ, ասաց նա յօժարակամ—ասա, ինչո՞ւ համար ես գնում Ամերիկա. եթէ միայն ծածուկ չէ այդ : Ես եղել եմ այնտեղ շատ ժամանակ, ճանաչում եմ շատ Ամերիկացիներու, և կարող եմ տալ քեզ լաւ խորհուրդ : Ես ծեր եմ, բայց դու մատաղահաս, կարելի է, որ քեզ նից աւելի հմուտ լինեմ: Մի մտածիր, թէ հարցնում եմ քեզ հետաքրքրութենից, դու ինձ պարզապէս իմացիր :

Նաւապետի խօսքերը արտաշնչվում էին բարութենով, և Ավդուստինը պարզապէս պատմեց նրան իւր պատմութիւնը : Ծովագնացը լսում էր ուշադրութենով, որպէս թէ սովորում է նրանից, և երբ վերջացրեց, նա պինդ սեղմեց նորա ձեռքը աւելացնելով այս խօսքերը .

— Դու լաւ մարդ ես : Ցոյց տուր ինձ այժմ քո հօրեղբօր թղթերը, ես կիմանամ այդ բանի միտքը, և կարող եմ քեզ ասել, թէ արդեօք ճշմարիտ են այդ վկայագիրները, և յոյս կայ արդեօք ստանալ ինչ և իցէ : Ահա դու ոչ ոքի հետ խորհուրդ չես տեսել , բացի մօրիցդ, որ չէ կարող շատ բան հասկանալ : Ցիմարաբար և զուր կըլինի գնալդ Ամերիկա, եթէ մի յոյս չ'կայ այդ գործի յառաջադիմութեան վերայ :

Թղթերը Ավդուստինի զրպանումն էին, նա իսկոյն առաց Նաւապետին—Սաեսինգին որնոր ուշադրութեամբ նայեցաւ և ասաց.

Այդ վկայագիրները օրինաւոր և ճշմարիտ են. նորա նամակները ամէնը կարգին են... բայց մի մտածիր. մատաղ բարեկամ, թէ այդ ամէնը հեշտութեամբ կատացվի : Այնտեղ շատ փող և շատ հոգացողութիւն է հարկաւոր : Այժմ դու չես կարողանում հատուցանել և ճանապարհի ծախքը: Հարկաւոր է լաւ մտածել, թէ ինչպէս պէտք է սկսել գործը : Ծերունին իւր ձեռքերը նեցուկ դրաւ իւր ալեզարդ գլխին. Ավդուստինն էլ զսպում էր իւր շնչառութիւնը, սպասելով անհամբերութեամբ, թէ ինչ է ասելու այդ բարի մարդը. որ դէպի նա զգացել էր մի այնպիսի սէր. ինչպէս դէպի հարազատ իւր ազգականը :

— Լսիր պատանի, ասաց նա, բարձրացնելով, գլուխը-ով կըսիրէ մօրը այնպէս ջերմեռանդութեամբ ինչպէս դու, նա համարձակ կարող է ովկիանոսների վրայով անցնել, որ կարողա-

նայ հասուցանել նրան կենցաղավարութեան միջոց: Հենց միայն դրանից կարելի է դատել, որ դու օրինաւոր մարդ կ'լինիս և կը հանիս քո նպատակիդ: Ես կամենում եմ օգնել քեզ ինչով կարող եմ: Դու զուարճացիր մի փոքր այս նաւահանգստում, ես կ'աշխատեմ քո գործիդ համար. դու սպասիր ինձ, մի ժամից յետ կը դառնամ, և կարելի է ուրախ համբաւով:

Դոհանալով նրանից Ավգուստինը խոստացաւ սպասել նորա դարձին, և գնաց նաւահանգիստը „Կարոլինան" անուանելու, որով ցանկանում էր ճանապարհորդել: Եթէ „Կարոլինան" գնար առանց նորա. նա պէտք է սպասէր երկար ժամանակ, և մնար այն քաղաքում ուրիշ նաւի երթալուն, որով անշուշտ կ'պակասէր և նորա փոքրիկ գումարը: Եթէ բարի Սաուտինգին յաջողվի, կարող կ'լինէր էժան գնով ճանապարհորդել: Այս մտքերով մանէր դալիս ծովի ափումը, և անհամբերութեամբ սպասում էր նաւապետի պատասխանին: Նորա մօտով անց ու դարձ էին անում շատ նաւաստիներ. որովհետև նաւահանգստում կանգնած էին շատ նաւեր. որոնք վեր էին առնում կամ դուրս էին բերում ղանաղան ապրանք:

Այդ անդադար շարժումները, տեսակ տեսակ դէմքերը, մէկը թուխ, միւսը սպիտակ, և բազմաթիւ մակոյկները, որոնք կանգնած էին նաւահանգստի մօտ, աղաղակը և բարբաջը դրաւում էին այդ մատաղահասի ուշադրութիւնը, որոնք առաջին անգամն էր ծովափնեայ քաղաք տեսնում, նա ամենևին մոռացաւ, թէ ինչու համար է ինքն այնտեղ. ուր բոլորը նորա համար նոր էր և զարմանալի:

Յանկարծ յուսահատութեան մի ձայն հարկադրեց նրան կանգնել: Նորա առաջև կանգնած էր մէկ կին, ձեռքին երեխայ, ու վանդակներից թեքված լինելով դցում է երախային ջրի մէջ: Ավգուստինը նկատեց և տեսաւ մէկ երեխայ, որ ծփվում էր ալիքների միջում: Զմտածելով երկար, Ավգուստինը ղցեց իւր վերնաշորը, թռաւ ջրի մէջ. լողաց դէպի խեղդվող երախայն: Նա գերազանց լողաց, և բռնեց մէկ ձեռքով դունատված աղջկանը, պահելով նրան ջրից բարձր ու լողաց կրկին դէպի ցամաքը: Այնտեղ արդէն հաւաքվել էին շատ հեռաքրքիրներ, որոնք նայում էին այդ պատահմունքին ինչպէս մի նշանաւոր դիպուածքի վերայ. միայն մի քանիսը սկսան բանալ իրանց նաւակները, և յառաջել դէպի երեխայի փրկողը: Աղջիկն անզգայացել էր, երբ որ Ավգուստինը մոցրեց նրան նաւակի մէջ: Երբ նա դուրս եկաւ ծովի ափը, դէպի նա արձակեցաւ կինը արտասուքով և ուրախութեամբ: Այդ պատանին երախայն տալով նրան զգուշութեամբ կամենում էր հեռանալ, որ փոխէ իւր թաց հագուստը. հենց այս միջոցում յանկարծ բազմութեան միջից դուրս եկաւ մէկ ձայն. և նայում էր ջրահեղձ երախային, որի ուշքը յետ էր դառնում:

— Ո՞վ փրկեց Լիւսիային, ո՞ւմից պարտաւոր եմ շնորհակալ լինել.

Կինը ցոյց տուեց Ավգուստինի վերայ, և նա յանկարծ երևեցաւ նաւապետ Սաուտինգի առաջ. որ խօսում էր խռովութեան մէջ:

Ահա և երևում է, որ բարի գործը ամէն ժամանակ վարձատրվում է: Ճանաչում ես արդեօք Ավգուստին այդ աղջկանը, որին դու փրկեցիր, դա նաւի տիրոջ աղջիկն է, որով դու կամենում ես գնալ Ամերիկա: Այնտեղ ես համոզել եմ պ. Սարոտին, որ անէ այլ բարութիւնը քեզ տանելու. դու փրկեցիր նորա սիրելի աղջկանը մահից, գնանք նորա մօտ, ես քեզ չեմ թողնել այժմ: Լիւսիան իմ հոգեզաւակն է, ես սիրում եմ նրան հօր պէս:

Ավգուստինը կամեցաւ հրաժարվել, որովհետև թրջված էր, բայց նաւապետը չը կամեցաւ լսել նրան, վեր առաւ Լիւսիային և այդ պատանեակին ու բերաւ դէպի մի մեծ տուն: Երեխայի հայրը վազեցաւ նրանց յառաջ սասիկ շփոթված, արդէն հասել էր նրան համբաւը այդ պատահմունքի համար, նա էլ չ'կարողացաւ ոչինչ արտասանել, միայն գրկեց երեխային և նորա փրկողին:

— Լաւ է, որ աղջիկ պարոնը չ'գիտէ ոչինչ, ասաց նաւապետը. եթէ ոչ, նա կմեռնէր երկիւղից: Այժմ ուրախութիւնը կը հարկադրէ մեզ մոռանալ այդ տարաբախտութիւնը. սակայն պէտք է առաջ հագցնել այդ քաջ պատանեակին ցամաք հագուստ, որ չ'լինի թէ նա հիւանդանայ:

— Եկէք նաւապետ իմ մօտ, ասաց պ. Սարոտը, — վեր առէք բոլորը, ինչ որ հարկաւոր է, ես գնամ պատրաստեմ ամուսնոյս, ես դեռ չեմ կարող ուշքի դալ, և ամենևին չեմ մոռանալ իմ աղջկանս փրկողին:

Երբ որ մօրը պատմեցին այդ պատահմունքը, նա գունատվեցաւ, և բռնեց երեխային, ու ծածկեց նրան ջերմ համբոյրներով: Արտասուքը թեթևացրեց նրան: Երբ որ Ավգուստինը ներս մտաւ, նա յարձակեցաւ դէպի նա մեծարելու համար, բռնեց նորա ձեռքերը, և արտասուքով ասաց.

— Ես ինչպէս շնորհակալ լինիմ քեզ նից, դուք փրկել էք իմ աղջկան, իմ սիրելի Լիւսիային . . . ինչով կարող եմ վարձատրոյց լինել ձեզ:

— Դա մի հասարակ պատահմունք է, պատասխանեց համեստաբար պատանին, ամէնքն էլ կարող են անել այդ:

— Բայց միայն այն տեղ կանգնած կային տասնի չափ բերանաբաց մարդիկ, և ոչ ոք չը շարժեցաւ տեղից, ասաց նաւապետը ծիծաղելով. ես զուր չեմ սիրել քեզ առաջին անգամ տեսնելովս:

Երկարաբանութիւն չէ հարկաւոր, թէ ինչպէս սիրեցին, և շնորհակալ եղան այդ պատանեկիցը, և թէ ինչպէս մեծարեցին նը-րան: Նա հանդիպեցաւ բարի ընտանեաց, և չմոցաւ թէ ինչպէս արտայայտէր իւր շնորհակալութիւնը: Նա կատարեալ բախտաւոր եղաւ իւր բարի գործով:

„Կարոլինա" նաւի հարուստ տէրը-Սարոտը կամեցաւ առատապէս պարգևատրել Ավգուստինին իրան հաւատարմութիւն ցոյց տալու համար, բայց Ավգուստինը չը ընդունեց ոչինչ. միայն խնդրեց Ամերիկա գնալու համար վկայագիր և մէկ յանձնարարական նամակ մի զօրեղ Ամերիկացու վերայ, որ կարողանայ հեշտացնել իւր հօգսերը և անբաւականութիւնները, որ կարող են պատահել մի Եւրոպացու նոր — աշխարհքումը: Այդ անշահասիրութիւնը չէր կարելի, որ չ'զարթնացնէր համակրութիւն ազնիւ և բարի նաւապետի մէջ, որ սիրեց Ավգուստինին ինչպէս իւր հարազատ որդուն և խոստացաւ հոգալ նորա համար, ինչպէս իւր որդւոյ վերայ:

Նաւի տիրոջ ընտանիքը կամենում էին պահել իրանց մօտ փոքրիկ Լիւսիայի փրկողին. բայց նաւապետը յայտնեց, որ չէ կարելի կորցնել ժամանակ, եթէ հողմը յարմար լինի, որ յաջողակ սկսվի երկար ճանապարհորդութիւնը: Հենց դորա մասին ինքը Ավգուստինը շտապում էր. որովհետև համարում էր ամէն մի կորցրած ժամը, որ չէր նուիրած անհոգ անելու համար իւր ընտանիքը: Սար-

բո

րել իմ խօսքս:

— Մի՞թէ նաւապետ Սահակինդը չէ կա՜, որդ ազատել քեզ:

Կարող է, միայն նա պարտաւոր է իմանալ Սորոսի համաձայնութիւնը: Սակայն ես այդ լաւ չ'գիտեմ, միայն իմանում եմ որ ես կատարեալ բախտաւոր կլինէի, եթէ կարողանայի չ'բաժանվել քեզնից:

— Կարող էք չ'բաժանվել իմ որդիք, յայտնեց նաւապետի բարձր ձայնը, որնոր աննկատելի կերպով մօտացել էր այդ մատաղահասներին, և լսել նոցա խօսակցութիւնը:— Հապա ինչո՞ւ դուք բայել էք ձեր աչքերը իմ վերայ· շարունակեց նա ծիծաղելով.— ես նաւի միջում կատարեալ իրաւունք ունիմ, կարող եմ արձակել մինչև անդամ ծովային ամէն զինուորներուն, ոչ թէ միայն մէկին: Ես յօժարութենով արձակում եմ Նադիին Ավդուսինի հետ որոհեռնդուք երկուսներդ էլ լաւ աղերք էք: Սորոսը յօժար կ'լինի, որ ես կատարելեմ Դիւսիայի փրկողի ցանկութիւնը: Դուք երկուսներդ կ'լինէք ուրախ միասին. և այդ ընկերութիւնը կ'պահպանէ ձեզ ծանր վայրկեաններումը: Որովհետև ես միշտ բաւական եմ եղել Նադիի ծառայութեամբը· ապա տալիս եմ նրան Սորոսի կողմից ընծայ հարիւր տալեր· որ դնէ իրա համար մի կտոր հող Ավդուսինի կայքից մօտ: Նրրև բախտաւոր ընկերներ ապրեցէք, և երբ որ նաւապետ Սահակինդը բոլորովին կը ծերանայ, և անպէտք կ'լինի դործքի համար տուէք և նրան մէկ տան անկիւն ձեզնից մօտ, ուր կարողանայ անցուցանել մնացեալ օրերը և հողին տալ իր ոսկորները:

Ուրախութիւնը և շնորհակալութիւնը այնպէս շփոթեցին այդ մատաղահասներին, որոնք չ'գտան մէկ խօսք, թէ ինչպէս արտայայտեն իրանց զդացմունքը: Նոքա նաւապետի ձեռքը բռնած համբուրում էին որդիական քնքուշութենով:

Այդ բաւական է, ասաց շարժված ծերը.— Եղէք մաքուր, բարի և ճշմարտասէր, սիրեցէք մինչև անդամ ձեր թշնամիներուն, և ձեր ամէն ձեռնարկութիւնը կը յաջողվի: Ահա մենք արդէն ծովի ափումն ենք, և ինձ պարտէ հրաման տալ նաւահանդստեան տեղը մտնելու:

Նաւապետը դնաց, ուր իրա պարտաւորութիւնն է, թողնելով նրանց կատարեալ բախտաւոր: Այդ մատաղ մարդիկը վստահաբար սպասեցին ապագային, նոցա աչքերը փայլեցին ուրախութեան արտասուքով, նոքա զրկախառնվեցան ինչպէս եղբարք, խոստանալով սուրբ պահել բարի նաւապետի խորհուրդը: Արդէն նոցա չուտ երևեցաւ ափը, որ այնպէս ամպամած էր, որ հազիւ թէ որոշվում էին տները, ծառերը և աշտարակները: Ավդուսինը հետաքրքրութենով նայում էր իւր նոր հայրենեաց վերայ. և նորա սիրտը սաստիկ հարկանվում էր ակնկալութենից: Վերջապէս „Կարոլինան“ մտաւ նաւահանդիստը: Նաւապետն էլ հրամայեց արձակել նաւակը, և ասաց այդ սիրելի ընկերաց:

— Պատրաստ եղէք, որ դաք ետևիցս, ես ինքս պէտք է տանեմ Ավդուսինին մարդու մօտ, որին յանձնել է Սորոսը: Ցուսով եմ, որ նա շատ կ'օգնէ քեզ այդ գործումը, շուտով Ավդուսինն էլ կ'ապահովէ իւր մօրը: Շուտ արէք, որ չ'լինի թէ հողմը փոխարկվի:

Այդ երկու ընկերները ունէին փոքր կայք, այդ էլ շուտով պատրաստեցին: Ճանապարհորդութիւնը երկար չէր, բայց այդ մատաղ մարդիկը կարծում էին երկար այդ ժամանակը: Նաւապետը գնաց շուտով Սորոսի բարեկամի մօտ, որնոր նիւ — Եօրքացի հարուստ վաճառական էր, և որ ցոյց տուեց ջերմ համակրութիւն այդ մատաղ մարդու դործի համար:

(Կը շարունակվի)

ՍՈԽԱԿԻ ԶԴԱՅՄՈՒՆՔԸ.

Պայծառ գարնան գով օրերով,
Այգուց այգուց թաւ սիզերով.
Ինչ այգին նուրբ շաղերով,
Կ'երգէր սոխակն շըվշըվալով:
Ամենիւ վարդին անդ թերաբաց,
Մարգարտաշաղ պուտ պուտ ցողուած.
Տեսարանովն խիստ զմայլուած,
Կ'երգէր թռչնիկն փողփողելով:—
„Բաց ամենիւ վարդ, ձայնիս բաց դարդ,
Կոկոններիդ կէս—բաց ու բարդ
Անուշ հոտովն թովուած, ես արդ
Շախ շախ կ'երգեմ շախկըրտալով:
„Ամ թէ քո թուփ չէր փշալը,
Ինչեալ թուփիդ կոկոնակիր.
Կըընկնէի բացման քու ձիր,
Խրախ հոգւոյ նոր երգերով:
Էն—Արարիչն իմու քու մէջ
Համակրութեան սիրոյ սուրբ շեղջ
Զրդեց, ա՛ ասեց պահել անշէջ
Ո՛հ, ես այդ կ'երգեմ ոստոստալով:
„Է վարդ ձայնս քեզնով բացուած.
Առանց քեզ վարդ ձայնս է հատուած.
Թարց ինձ դու—վարդ երբ ես տեսուած,
Վա՜շ ծոմս կ'երգեմ ճրխճրխալով:
„Երդ իմ, վարդ՝ թարց՝ քեզ է ինձ տոյժ,
Թարց քեզ ինձ սէր մահ է և գոյժ.
Ուրեմն, քեզ՝ ինձ որքան կայ ոյժ
Կ'երգեմ ձիլ ձիլ ճըվվըլալով:
„Ոչն 'ի բնէ կըշռեց արժէք
Գեղեցկութեանդ՝ դայլայլ իմ երգ.
Եւ գեղդ՝ անդոյդ երգոյս իմ հեգ.
Զի՞ չ'երգեցից դայլայլելով·
„Գոհ եմ արժէքիս, վարդ իմ, գոհ·
Վարդ, թէ տրտունջ զինէն է քո,
Հա՜հա արա սիրոյդ զիս զոհ,
Երգել յապայս ճենճերելով:
„Սուր թէ ինձ ահ մահու ցուցցէ,
Սուդ թէ յետին շունչս ընկճիցէ.
Սիրոյդ 'ի տես երբ և իցէ,
Սուր սուր կերգեմ կկրկլալով:
„Արդ էր մարդիկ զուր զմայլուին,
Եւ սէր 'ի տանջ սիրահարուին.
Թող ես միայն ամենիւ վարդին
Ամենիւ դունին, ամենիւ հոտին:
„Յոյլ կենսական ոգին և հոյլ,
Մեքենայիւ բուռն սիրոյս
Քարշեմ 'ի սիրուս երակներոյս
Ճիշտ կենսատու ոգին հոգւոյս:
„Սովաւ զիլ զիլ ես ձայն տալով,
Ճախրաշրջան վեր վեր կալով,
Կ'երգեմ կ'ասեմ վարդիս դալով,
ԻՄՍ ԵՍ, ԻՄՍ ԵՍ, թրթռալով:

Պարայ Բահաթրեանց:

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ
Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Ի Տպարանի Հ. Էնֆիաճեանցի ընկ.
Ի տան. Զիթախեանց.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ 18 ЯНВАРЯ 1869 Г.
ТИФЛИСЪ.